

03.05.2019 17:47



**Վերապատրաստման
դասընթաց - քննարկում
15 մայիսի 2019թ.
ք. Գյումրի**

Հարգելի՛ փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) և Գերմանիայի փաստաբանների դաշնային պալատի հետ համատեղ **Շիրակի, Լոռու ինչպես նաև հարակից այլ մարզերի** փաստաբանների համար կազմակերպում է վերապատրաստման դասընթաց-քննարկում՝ **«Փաստաբանների պալատների կողմից լրատվամիջոցների և հանրության հետ տարվող աշխատանքները»** թեմայով:

Վերապատրաստման դասընթացի շրջանակներում զեկույցներով հանդես են գալու **գերմանացի փորձագետներ**՝ Գերմանիայի դաշնային փաստաբանների պալատի հասարակության հետ կապերի գծով գործադիր տնօրեն-մամուլի խոսնակ, **փաստաբան Շտեֆանի Բեյրիխը** և Գերմանիայի Թյուրինգիա քաղաքի փաստաբանների պալատի նախագահ, Գերմանիայի դաշնային փաստաբանների պալատի մամուլի և հանրության հետ աշխատանքի հանձնաժողովի անդամ, **փաստաբան Յան Հելգե Քեսթելը**, ինչպես նաև **ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը**:

Վերապատրաստման դասընթացի շրջանակներում հյուրընկալելու ենք նաև IRZ ժրագրերի մենեջեր՝ Ամալիա Վոլքերթին:

Դասընթացը տեղի է ունենալու 2019թ. մայիսի 15-ին, ժամը 10:00-ից 17:00-ն՝ քաղաք Գյումրի, Հաղթանակի պողոտա 25 հասցեում գտնվող «Բեռլին Արտ» համալիրի դահլիճում:

Դասընթացն անցկացվելու է հայերեն և գերմաներեն լեզուներով՝ համաժամանակյա թարգմանությամբ:

Դասընթացին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի 8 (ութ) ակադեմիական ժամ վերապատրաստում: Դասընթացին նախապես գրանցված մասնակիցներին դասընթացի ավարտին կտրվի մասնակցության վկայական:

Դասընթացին կարող են մասնակցել **ոչ ավել, քան 30 (երեսուն) փաստաբան:** Նախապատվությունը կտրվի դասընթացին ավելի վաղ գրանցված փաստաբաններին: Դասընթացին գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել **ani.gharibyan@advocates.am** էլ. հասցեին՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԳՐԱՆՑՎԵԼ, ԵՔԵ ՎՍՏԱՀ ԵՔ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴՐԱՆ ԺԱՄԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՄՔՈՂՋ ԾԱՎԱԼՈՎ:

Առդիր՝ դասընթացի օրակարգը

Առաջարկվող նորություններ



21.01.2016 ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՓՈՐՁԻ
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ



05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐՁԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ



05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐՁԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ



05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԼՈՌԻՈՒ ՄԱՐՁԻ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })